# Հայտարարություն

Վաղարշապատի համայնքապետարանի թիվ 8 «Ոստան» մսուր- մանկապարտեզ ՀՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ հետևյալ մանկավարժական աշխատողների ընտրության համար.

1. Դաստիարակ՝ 1,17 դրույքային միավոր
2. Դաստիարակ /հերթապահ/՝ 0,59 դրույքային միավոր
3. Դաստիարակ /երկարօրյա/՝ 0,36 դրույքային միավոր

Մրցույթն անցկացվելու 1 երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Հարցաշարերը հրապարակված են ԿԳՄՍ նախարարության պաշտոնական կայքէջում: Յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացվում է առանձին:

Մրցույթին կարող է մասնակցել այն անձը, ով ունի միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ միջին կամ բարձրագույն մանկավարժական կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտում առնվազն երեք տարվա մանկավարժական գործունեության ստաժ կամ ունի միջին կամ բարձրագույն մանկավարժական կրթություն և հատուկ դասընթացի միջոցով ձեռք է բերել նախադպրոցական մանկավարժության, հոգեբանության և ուսումնամեթոդական հմտություններ ապահովող առնվազն 20 կրեդիտ:

Դիմող քաղաքացիները թիվ 8 «Ոստան» մսուր-մանկապարտեզ ՀՈԱԿ են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) դիմում (Ձև 1),
2) կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ),
3) անձը հաստատող փաստաթուղթ,
4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում)
5) ինքնակենսագրություն (Ձև 4),
6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ.
8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական,
9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերն ընդունվում են 2026թ. մայիսի 19-ից հունիսի 16-ը ներառյալ՝ յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը 09:00-ից 17:00-ն:

Մրցույթը կկայանա 2026 թվականի հունիսի 18-ին, ժամը 11:30-ին Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնում /հասցե՝ ք. Էջմիածին, Մ. Մաշտոց 0/:

Տեղեկությունների համար զանգահարել 096-10-45-01 կամ 0231-4-19-90 հեռախոսահամարով:

Հասցե՝ Արագածի զանգված 21

Էլ. փոստ՝ tiv8vostanmsur-mankapartez@mail.ru